

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ա. Ս. Սահակյան

Ազաթանգեղոսի խմբագրությունների տիպաբանություն

(Ներկայացված է ՀՀ ԳԱԱ թղթ. անդամ Լ. Ն. Աբրահամյանի կողմից 25/X 2021)

Բանալի բառեր՝ *Ազաթանգեղոս, պատմություն, վարք, հունարեն, ասորերեն, արաբերեն, լատիներեն, բնագիր, խմբագրություն, տիպաբանություն:*

Մայր Ազաթանգեղոսի բովանդակային (մասամբ էլ բնագրային) հենքի վրա ստեղծվել են երկու հայկական (հուն. «Վարք» և Օքրիդայի «Վարք») և մեկ ասորական խմբագրություններ, որոնք ունեն ակնհայտ եկեղեցաբանական, եկեղեցա-քաղաքական, դավանաբանական և առհասարակ գաղափարաբանական բնույթ: Բացի այդ, եղել են նաև այլ տիպի խմբագրություններ, որոնք չեն դիտարկվել Ազաթանգեղոսի այլալեզու տարբերակներում, և որոնց պետումը արխիվներից և միջնադարյան վանական հավաքածուներից հատկապես հաջողվել է ազաթանգեղագետ Ժերար Գարիտին: Վերջինիս հայաստանյան «թղթակից» Արամ Տեր-Ղևոնդյանն իր հոդվածներից մեկում ի մի է բերել գրանցված ազաթանգեղյան խմբագրությունները (հայերենը ներառյալ՝ 17 միավոր, ինը լեզվով ([1], էջ 494-495) և բաժանել երկու խմբի՝ հայերեն՝ նրանից արված թարգմանություններով, և վարքային խմբագրություններ:

Իրականում 20 միավորից շատ են, եթե չանտեսենք հայերեն հայսմավուրբները և հիսուսյան Անտոն Բոնուկիի (XVIII դ. I կես) լատիներեն գրած «Ս. Գրիգորի վարքը» ([2], էջ 950) և նրա հայերեն ([2], էջ 950-951) ու արաբերեն ([1], էջ 349-354) թարգմանությունները: Եվ այսպես, դրանք բաժանվում են ոչ թե երկու, այլ չորս տիպի խմբագրությունների, և ահա թե ինչպես:

Վերը նշվեց նույն տիպի երեք խմբագրությունների մասին. հուն. և Օքրիդայի վարքեր, որոնք թարգմանվել են հայերեն նախօրինակներից,

և ասորական եկեղեցա-քաղաքական խմբագրություն, որի տիպին է պատկանում նաև վերոնշյալ լատինական վարքը՝ իր լրիվ հայերեն և համառոտ արաբերեն թարգմանություններով: Որովհետև այն ասորականի նման հայերեն նախօրինակ չունեցող միանգամայն ինքնուրույն լատիներեն շարադրանք է, որը կոչված է ցույց տալու, որ ս. Գրիգորը կաթողիկե կամ ընդհանրական տիեզերական եկեղեցու հետևորդ է եղել, բայց հայ եկեղեցին իբր հետագայում շեղվել է ճշմարիտ դավանաբանական ուղուց: Այն կարելի է կոչել լատինական վարք [3]:

Իսկ ամենաառաջին տիպը մայր Ազաթանգեղոսն է և նրանից բխող թարգմանական խմբագրությունները՝ վրացերեն և հունարեն [4], վերջինից էլ՝ արաբերեն [5]: Այս հունարեն թարգմանության հիման վրա X դ. ստեղծվել է Մետափրաստյան համառոտ խմբագրությունը, իսկ նրանից թարգմանվել են բազմալեզու տարբերակներ՝ լատիներեն, վրացերեն, սլավոներեն, արաբերեն, վերջինից էլ՝ եթովպերեն: Եթե սրանց էլ ավելացնենք հայերեն հայսմավուրքային տարբերակները, կունենանք մի ընդհանուր անվամբ տոնացուցային խմբագրության տիպ, որը խիստ գործառնային է, ունի արարողակարգային բնույթ, ուղղված է տոնական լսարանին և բարձրաձայն ընթերցվում է, եթե անգամ լսարանը դատարկ է, ինչը հաճախ է լինում մեր ժամանակներում, որովհետև այդ ընթերցմամբ սրբին է հղվում հերթական խընդրանքը՝ բարեխոսելու մեղավոր հոգիների համար:

Ստեղծվել են նաև ընդհանուր ճանաչողական բարեխոսական նպատակի միտված խմբագրություններ, որոնք, որպես կանոն, հենվում են մեկից ավելի աղբյուրների վրա և կոչված են ընթերցողական նյութ մատուցելու բարեպաշտ քրիստոնյաներին աշխարհի տարբեր մասերում տառապող և սքանչելագործող հավատակիցների վերաբերյալ: Խմբագրության այդ տիպին են պատկանում արաբական վարք կոչվածը՝ գտնված Ն. Մառի և լրացված Ա. Տեր-Ղևոնդյանի կողմից, Լաֆոնտենի գտած հունարեն համառոտ վարքը ([6], էջ 125-145), Գարիտի կոպտական դրվագը և արաբերեն համառոտ վարքը ([7], էջ 221)՝ հավանաբար կոպտերենի միջնորդությամբ թարգմանված հունարենից՝ ըստ նույն Գարիտի ([8], էջ 51-71):

Հետաքրքիր է, որ արաբերեն վարքի (Ն. Մառի) թարգմանիչը, եթե հունարեն մեկ բնագրից չի թարգմանել, ուրեմն ինքն է հունարեն մի քանի բնագրերից քաղել և կազմել նոր կոմպիլատիվ խմբագրությունը, դրա համար էլ նրանում նկատվում են հուն. Ազաթանգեղոսի, հուն. վարքի և Օքրիդայի վարքի հետքերը: Կրկին կուգեինք չբացատել հնարավորությունն այն բանի, որ այդ գործը կատարել է մի անհայտ հույն խմբագիր վերոնշյալ աղբյուրների համադրմամբ: Որովհետև, ինչպես արաբ, այնպես էլ հույն խմբագրին հետաքրքիր չեն այն եկեղեցա-

բանական ենթատողային գաղափարները, որոնք առանձին-առանձին կյանքի են կոչել դրանց հայերեն նախօրինակները: Հույն կամ արաբ խմբագրին հասու չեն տեղական հայկական անցյալի քաղաքական միտումները, որոնք չէին ընկալվի, եթե օտար խմբագիրները ապրեին անգամ VII դարում, երբ ստեղծվել են հայերեն քաղկեդոնական և միակամական խմբագրությունները և թարգմանվել հունարեն հենց հայերի նախաձեռնությամբ: Այլազգի խմբագիրները ազաթանգեղյան այդ տարբեր գրվածքները կարևորում էին սրբախոսական տեղեկատվական իմաստով՝ որպես ճանաչողական լրացուցիչ նյութ, որը և հանգեցնում էր գրչական-տեղեկատվական խմբագրությունների ստեղծման:

Նույն երևույթը ենթադրել ենք նաև հայերեն մայր Ազաթանգեղոսի հունարեն թարգմանության հետագա ճակատագրում, երբ հերթական գրիչը Օքրիդայի «Վարքի» կորած վիպական սկզբնամասը ներմուծում է հուն. Ազաթանգեղոսի բնագիր՝ ճոխացնելով վերջինս և աղբյուր դառնալով Սիմեոն Մետափրաստեսի խմբագրության համար:

Հենց այս տեսակետից էլ կարելի է հասկանալ ու մեկնաբանել այն առանձնահատկությունները, որոնցով աչքի են ընկնում, ասենք, հուն. համառոտ վարքում, Գևորգ Ասորու մոտ, նեստորական Պատմության կամ արաբերեն համառոտման մեջ եղած ազաթանգեղյան նյութերը: Դրանք կարևորում են միայն սրբի անձն ու նրա սքանչելագործությունները, այսինքն՝ այն տեղեկատվությունը, որը հուսադրում ու վեհացնում է ընթերցողին՝ նրան տալով բարեխոսի մի նոր կերպար: Եվ հենց այս միտումն է, որ Ազաթանգեղոսին համաշխարհային գործառույթներ է տվել, և Գրիգորին պանծացրել տիեզերական եկեղեցում և աշխարհի բազում ազգերին հայաշխարհի մասին գիտելիքներ մատուցել:

Պատկերացնել կարելի է, թե աստուծո հույսով առօրյա տառապանքների մեջ ապրող հույնը, հաբեշը, կոպտը կամ արաբը, կարդալով ս. Գրիգոր հայի վարքը, ինչպես է ի դեմս նրա ձեռք բերել մի նոր ու գորավոր բարեխոսական հենարան և ինչպես է ըստ էության ըմբռնել սրբին, որ արաբական համառոտման մեջ կամ անհայտ մի այլ տարբերակում դուրս է թողել բնագրի ավելորդ շեղումները և կիզակետ դարձրել մեն մի հերոս Գրիգորին՝ հենց նրան իսկ դիտելով հայոց թագավորի խոզացման պատճառ: Մա նշանակում է, որ ոչ թե հայկական ինչ-որ բնագրից է ծագում նման տեղեկությունը, թեկուզ Ազաթանգեղոսի սկզբնական փուլում՝ առանձին պատմվող Գրիգորի վարքում, հենց այդպես էլ պետք է լիներ, այլ, որ այուժետային բնական պատումը վերագարթնում է, երբ շեշտը դրվում է նրա բնական ֆունկցիոնալ նշանակության վրա, այն է՝ ընթերցողի բարեպաշտական պահանջ-

ների իրագործումը: Ոչինչ, որ կփոխվի սյուժեն, կադավաղվի բնագիրը, ոչինչ, որ միակ պատմական տեղեկությունը կմնա ս. Գրիգորի պատ-
րիարք լինելը Հայաստանում, կարևորը նոր ճանաչվող սքանչելի սրբի
համոզվելությունն է ընթերցողի համար և վերջինիս նորովի հուսա-
վառումը: Ահա՛ ս. Գրիգորի նախնական ու վերջնական առաքելու-
թյունը քրիստոնյա աշխարհում, ահա՛ դեպի ուր է ձգում սուրբն իր
վարքի այլալեզու ընթերցողների զանգվածային ընկալումների մեջ գո-
նե մինչև XVIII դարը:

Այսու հերթական անգամ հաստատվում է մշակութային զար-
գացման պատմության օրինաչափ կրկնություններից մեկը, որն ուղե-
կցել է ողջ Հին աշխարհն ու միջնադարը. որևէ մշակութային կենտրո-
նում պատվիրվող և ստեղծվող տեքստը (բառիս նշանագիտական լայն
առումով) այդ իսկ կենտրոնում ընկալվում է մեկ կերպ (= լիարժեք,
ամբողջովին, ենթատողային իմաստներով և այլն), նույնալեզու մշա-
կութային ծայրամասում ընկալվում է այլ կերպ (առավել աղքատացած,
տերևաթափ եղած), իսկ ահա այլալեզու մշակութային տարածքներում
ընկալվում է միագիծ, միանշանակ, սյուժետային մերկությամբ ու բա-
ցարձակ բարոյախոսական եզրահանգմամբ: Դրա համար էլ մշակու-
թային կենտրոններում տվյալ տեքստի կրած փոփոխություններն
ունեն գաղափարական միտումնավոր բնույթ, իսկ ծայրամասերում
կրած փոփոխումները՝ կենցաղային-բարոյախոսական ու հումանիս-
տական բնույթ, մի տեսակ ընթերցողաբավ, առօրեական պահանջ-
ների բավարարող բնույթ:

Մենք քննարկեցինք միայն գաղափարաբանական հատուկ մի-
տումներ ունեցող խմբագրությունները և ցույց տվինք, որ Ագաթան-
գեղոսի միտումնավոր խմբագրությունները օտար միջավայրում թարգ-
մանվելուց հետո աստիճանաբար զրկվում են իրենց սկզբնական մի-
տումներից և վերածվում զուտ ընթերցողական ճանաչողական սրբա-
խոսության, իսկ ի սկզբանե օտար լեզուներով ստեղծված խմբագրու-
թյունները լինում են կամ միտումնավոր (№ 2 տիպի), կամ էլ պար-
զապես տեղեկատվական ճանաչողական:

Այսպիսով, քսանից ավելի ագաթանգեղյան առանձին միավորների
դասակարգումն ըստ խմբագրական բնույթի՝ մեզ հանգեցրեց հետևյալ
տիպերին.

1. Մայր Ագաթանգեղոս և նրա թարգմանական տարբերակներ
2. Եկեղեցաքաղաքական խմբագրություններ. հուն. «Վարք» և Օք-
րիդայի «Վարք», ասորական և լատինական «Վարք»-եր
3. Տոնական-արարողակարգային խմբագրություններ. Մետա-
փրաստյան և հայսմավուրքային վարքեր
4. Ճանաչողական-տեղեկատվական խմբագրություններ:

Խմբագրական բնույթի տակ հասկանում ենք որևէ երկի տարբերակի ուրույն պատմաֆունկցիոնալ դերը, նշանակությունը, այն, ինչը հարկադրել է խմբագրին ստեղծելու տվյալ խմբագրությունը, այն նպատակը, որով կյանքի է կոչվել կոնկրետ պատմական տարածաժամանակային միջավայրում:

Հետևաբար՝ արժե ըստ այդմ բնորոշել ամեն մի խմբագրական տիպ առանձին-առանձին:

№ 1-ը մայր Ագաթանգեղոսն է, որի պատմաֆունկցիոնալ արժեքը դրսևորվել է այն բանում, որ V դ. 30-ական թվականներին հայ եկեղեցին, սեփական սրբազան դարձաբանական պատմությունն ու վարդապետությունը վավերացնելու նպատակով, ստեղծել է Ագաթանգեղայ Պատմությունը: Այն, ինչպես ոմանք ենթադրել են, հայ եկեղեցու ներսում V-VIII դարերի ընթացքում անցնելով որոշ խմբագրական փոփոխություններով, ինչպես մենք ենք կարծում, նույն դարերի ընթացքում ենթարկվելով որոշ պաշտոնական խմբագրական փոփոխումների, ձեռք է բերել վերջնական ավարտուն և ընդհանրական բնույթ, որովհետև նշված խմբագրական փոփոխումներն արվել են նույն տրամաբանությամբ, ծառայել են նույն նպատակին, ինչ ունեցել է V դարի I կեսի հեղինակային հանձնախումբը (Մահակ, Մաշտոց, Կորյուն և Եզնիկ): Հետևաբար՝ հետագայի հավելումները կոչված են եղել պարզապես խորացնելու և զարգացնելու սկզբնական հեղինակային նպատակադրումը, որն իրավամբ ներկայացնում է հայ եկեղեցու պաշտոնական տեսակետը բոլոր ժամանակներում, քանի նա կա: Այդ պատճառով էլ ճիշտ կլինի այն կոչել պաշտոնական խմբագրություն կամ մայր Ագաթանգեղոս:

Ինչ վերաբերում է վերջինիս այլալեզու թարգմանություններին, ապա դրանք պետք է կոչել հենց այդպես. ոչ թե առանձին խմբագրություն, այլ թարգմանական տարբերակներ, որովհետև դարերի ընթացքում դրանք ձեռք են բերել գրչական տարբերություններ մայր Ագաթանգեղոսի հետ միասին: Այլալեզու տարբերակները վկայում են, որ մայր Ագաթանգեղոսը ընկած է համաշխարհային ագաթանգեղյան նյութի հիմքում:

№ 2 տիպը, որ կոչվում է եկեղեցաքաղաքական խմբագրություն, պատմաֆունկցիոնալ տեսակետից բնորոշվում է իբր այլընտրանքային: Եվ իրոք, այդ տիպին պատկանող երկու խմբագրությունները, որոնք պահպանվել են միայն հունարեն թարգմանություններով և հայտնի են հուն. «Վարք» և Օքրիդայի «Վարք» անուններով, ցույց են տալիս, որ VI դ. վերջին ստեղծված հայ քաղկեդոնական եկեղեցին իր կարճատև կյանքի ընթացքում հասցրել է ունենալ սեփական Ագաթանգեղայ Պատմությունը՝ իբր այլընտրանք եղածի, իսկ VII դ. 30-ա-

կան թվականներին հայ եկեղեցին, ժամանակավորապես ընդունելով միակամական բնույթ, ստիպված էր ըստ այդմ մայր Ազաթանգեղոսի փոխարեն ներկայացնել նոր խմբագրություն:

Իսկ նույն տիպին պատկանող երկու այլ խմբագրություններ, ստեղծվելով միանգամից օտար լեզուներով՝ ասորերեն և լատիներեն, պատմաֆունկցիոնալ առումով նշանակալի են այնու, որ առաջինը կարևորել է հայ-ասորական միջեկեղեցական քաղաքական հարաբերությունների նոր փուլը (VIII դ. I քառ.), իսկ երկրորդը փորձել է ստեղծել Ազաթանգեղոսի նոր խմբագրություն հայ կաթողիկե եկեղեցու տեսակետից (XVIII դ.), իհարկե, հենվելով նախորդ դարերում ձևավորված պատկերացումների ու Կղեմես Գալանոսի պատմական շարադրանքի դրույթների վրա:

Ինչպես տեսնում ենք, եկեղեցաքաղաքական տիպի խմբագրություններն օգնում են բացահայտելու հայոց պատմական անցյալի նոր դրվագներ, հարստացնում են պատմությունը միջազգային եկեղեցական հարաբերությունների նոր էջերով: Ուստի № 2 տիպի խմբագրությունները պետք է գնահատել իբրև պատմականորեն ամենատեղեկատվական բնագրերը:

№ 3 տիպի խմբագրությունները, որ կոչում ենք տոնական-արարողական, ունեն ընդգծված պատմաֆունկցիոնալ ուղղություն, այն է՝ ամբողջ բնագիրը հարմարեցնել սրբի հիշատակի օրվա բարձրաձայն ընթերցման: Ուստի այս խմբագրությունների՝ մետափրաստյան թե հայսմավորքային, տարածման գլխավոր պատճառը եկեղեցիների տոնական տարվա պահանջների բավարարումն է:

№ 4 տիպը ակնհայտորեն կրում է ընթերցարանային բնույթ, դրա համար էլ այն կոչել ենք ճանաչողական-տեղեկատվական: Այն պատմաֆունկցիոնալ ամենացածր արժեքով է օժտված՝ նախորդ տիպերի հետ համեմատած: Այս տիպի խմբագրություններին, ինչպես երևում է պահպանված բնագրերից, հատուկ է Ազաթանգեղոսի պատմություն ստեղծած մշակութային կենտրոնից՝ հայ եկեղեցու կաթողիկոսարանից, հեռու լինելը թե՛ տարածքով, թե՛ լեզվով: Այն կախված չէ, սակայն, ժամանակա-տարածքային որոշակի միջավայրից, ըստ էության այն դուրս է պատմական հանգամանքներից և բոլոր ժամանակների համար է, քանի դեռ աշխարհում կլինի քրիստոնեությունը:

Մատենադարան

e-mail: artsruni.sahakyan@gmail.com

Ա. Ս. Սահակյան

Ագաթանգեղոսի խմբագրությունների տիպաբանություն

Ագաթանգեղոսի խմբագրությունների տիպաբանությունը տրվում է ըստ այն հատկանիշի, թե նրանց պատմաֆունկցիոնալ նշանակության որ կողմն է գերակշռում տվյալ բնագրում: Ագաթանգեղոսի բոլոր խմբագրությունները բաժանվում են չորս տիպի: Այդ քառաստիճան տիպաբանական սանդղակում յուրաքանչյուր նախորդ տիպ, իր գերակշիռ հատկանիշից բացի, պարունակում է նաև հաջորդող տիպերի բոլոր հատկանիշները: Եվ ընդհակառակը, յուրաքանչյուր տիպ զուրկ է սանդղակում իրեն նախորդող տիպերի հատկանիշներից:

А. С. Саакян

Типология редакций Агафангела

В основу классификации разноязычных редакций Агафангела положено их историко-функциональное значение, доминирование того или иного признака. Все разноязычные редакции подразделены на четыре типа. В этой четырехступенчатой градации каждый тип помимо своего доминантного качества содержит в себе еще и рудименты особенностей следующих типов, и, наоборот, каждый следующий тип лишен характерных признаков прежних типов.

A. S. Sahakyan

Typology of Editions of Agathangelos

The typology of editions of Agathangelos is given based on the dominant feature of the historical-functional meaning of the source. The editions of Agathangelos could be classified into four types. In the four-level typological scale of editions of Agathangelos in different languages each previous type, besides its own dominant feature, also contains the features of next types. And the opposite, each type is devoid of the features of its previous types.

Գրականություն

1. *Տեք-Ղևոնդյան Ա.*, Հոդվածների ժողովածու, Երևան, 2003, 698 էջ:
2. *Անասյան*, Հայկական մատենագիտություն, հատ. Ա, Երևան, 1959, 1230 էջ:
3. Պատմութիւն կենաց... և. Գրիգորի... ի յԱնտոնէ Մարիա Բոնուկիէ, Վենետիկ, 1737, 222 էջ:
4. La version grecque ancienne du livre Armenien d'Agathange. Ed. crit. par Guy Lafontaine, Louvain-la-Neuve, 1973, 362 p.

5. *Տէր-Ղևոնդյան Ա.*, Ազաթանգեղոսի արաբական նոր խմբագրությունը, Երևան, 1968, 120 էջ:
6. *Lafontaine G.* – Le Museon, 1973, № 86, 1-2, p. 125-145.
7. *Garitte G.* – Le Museon, 1941, № 54, 1-4, 1941, p. 221.
8. *Garitte G.* – Le Museon, 1952, № 65, 1-2, p.51-71 (վարքի հայերեն թարգմանությունը՝ [1], էջ 55-59).